պետութեան անկախութեան ճանաչման և ինքնիշխանութեան հիմունքների վրա։ Իմ կառավարութեան լիազօրած պատուիրակութիւնն արդէն ձեր հանրապետութեան սահմաններում է յիշած բանակցութիւնները ձեր կառավարութեան հետ վարելու համար. № 2740»։

Մայիս 17-ին Զիչերինը պատասխանեց. «Խորհրդային կառավարութիւնը սրանով յայտնում է իր համաձայնութիւնը կնքելու Հայաստանի կառավարութեան հետ պայմանագիր՝ երկու ժողովուրդների միջև բարեկամական յարաբերութիւններ հաստատելու նպատակով։ Խորհրդ. կառավարութիւնը սպասում է ձեր պատուիրակներին, որոնք արդէն ճանապարհւել են դէպի Մոսկվա։ Ձեր պատուիրակութեան Մոսկվայից Երևան հաղորդակցութեան մէջ մտնելու տեխնիկական դժուարութիւնները վերացնելու նպատակով տրամադրեցինք մեր ուղիղ հեռագրաթելը՝ Ռոստովի և Թիֆլիսի վրայով։ Խնդրում ենք այդ մասին նախօրօք համաձայնութեան գալ Վրաստանի կառավարութեան հետ։ № 150»։

Թէ Մոսկվայում այդ օրերին ինչ տրամադրութիւն էր տիրում հայերի և Հայաստանի նկատմամբ, ցոյց է տալիս Ղարաբաղի կոմիտէի ներկայացուցիչներ Ա. Երզնկեանի և Ս. Փիրումեանի զեկուցումը՝ տպւած Թիֆլիսի «Սլովո» թերթում։ «Պատուիրակ Երզնկեանի ընդարձակ զեկուցումից յետոյ, գրում է թերթը, առանձնապէս ուշադրաւ էր ռուսական շրջանակներում ստեղծւած այն բնորոշ տրամադրութիւնը, որ առաջացել էր նախքան հայկական պատուիրակութեան Մոսկվա մեկնելը, թիւրք-թաթարական պրոպագանդայի շնորհիւ՝ նպատակ ունենալով մոլորութեան մէջ պահել Ռուսաստանի հասարակական կարծիքն ու նրա ղեկավար շրջանները։ Պատուիրակները Մոսկվա հասնելով՝ շւարած են մնում այն ստերի վրա, որոնցով կերակրւելիս են եղել ընթերցողներին կառավարական օրգանները — «Իզվէստիա»-ն, «Պրաւդա»-ն և այլ թերթեր։

Այդ լրագրական յօդւածներում շարունակ այն միտքն է արծարծւել, թէ՝ Հայաստանը, Լեհաստանի նման, դաշնակիցների գործիքն է, թէ իմպերիալիստ դաշնակիցները համարեա թէ ամէն օր Հայաստան են ներմուծում լեռների չափ ռազմամթերք, դինագործական արհեստանոցներ, որոնք առանց դադար առնելու՝ ռազմամթերք են պատրաստում, թէ գործը փայլուն կերպով է դրւած և երկաթուղային ցանցի վրա աշխատանքը եռում է։ Ամբողջ աշխարհի բուրժուաները հաւաքւել են Հայաստանում շահագործելու համար պրոլետարիատին և այնպիսի քաղաքականութիւն են մտցրել, որ ուղղւած լինի սոցիալիստական Ազրբէջանի և սոցիալիստական Տաճկաստանի խեղճ ու կրակ աշխատաւոր զանգւածների դէմ։ Այդ երկու երկրների մուսուլման ժողովուրդները հանդիստ չունեն հակայեղափոխական հայոց կառավարութեան հակայաթիւ զօրքերի նաճողական յարձակումներից։ Հայ հակայեղափոխականների ձեռքով ստեղծւած Ղարաբաղի անցքերի ժամանակ տուժեցին ոչ թէ հայերը, այլ խորհրդային իշխանութեան մշտական կողմնակից մուսուլման աշխատաւորութիւնը։

Այդ անպատկառ գործունէութիւնը մերկ, քաղցից ու ցրտից մեռնող Հայաստանի դէմ վերջին տարիներս վարում էին կոմունիստական դիմակի տակ ծածկւած թալիշ փաշաները, Կազանի թաթարները, որոնք արտօնեալ դերք ունէին Մոսկվայի ազգային գործերի ժողովրդական կոմիսարիատում, և իրենց կոմունիստ անւանող Բաքուի թաթարները։

Ռուս հասարակութիւնը, որ դեռ ցարական ժամանակաշրջանում անտեղեակ էր կովկասեան գործերից, յեղափոխութեան վերջին երեք տա-